



Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԳՈՐԾԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

9 դեկտեմբերի 2025 թվական

ք. Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի նախագահ Հովսեփ Բեդկյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահ Գոռ Հակոբյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Համլետ Ասատրյանս, նիստում ուսումնասիրելով թիվ ՎԴ5/0312/05/25 գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու վերաբերյալ ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2025 թվականի նոյեմբերի 20-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին 2025 թվականի մայիսի 17-ին հայցադիմում է ներկայացրել (փոստին է հանձնել) ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի, երրորդ անձինք՝ ՀՀ կադաստրի կոմիտե, Մ.Բ. և Է.Յ.՝ ՀՀ Շիրակի մարզի Արթիկի քաղաքապետի՝ 2008 թվականի մայիսի 21-ի թիվ 964 որոշման առոչինչ լինելը ճանաչելու, որպես հետևանք՝ 2008 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 2264 հողամասի առուվաճառքի պայմանագիրը և 2008 թվականի նոյեմբերի 6-ին Մ.Բ. և Է.Յ.-ի անվամբ

կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին:

2. ՀՀ վարչական դատարանի՝ 2025 թվականի հոկտեմբերի 30-ի որոշմամբ գործը վերահասցեագրվել է ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

3. ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2025 թվականի նոյեմբերի 20-ի որոշմամբ գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարան:

4. Գործը ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել է 2025 թվականի նոյեմբերի 25-ին:

Ենթակայության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

5. Հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածին և 24-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 10-րդ հոդվածի 1-ին մասին, 81-րդ հոդվածի 1-ին մասին և 127-րդ հոդվածի 10-րդ մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ և 21-րդ հոդվածներին, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետին, 128-րդ հոդվածի 1-ին կետին, 129-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերին, 163-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերին, 437-րդ հոդվածի 1-ին կետին և 463-րդ հոդվածի 1-ին, 2-րդ ու 4-րդ կետերին, ՀՀ հողային օրենսգրքի 63-րդ և 67-րդ հոդվածներին, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասին, ինչպես նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի հուլիսի 27-ի թիվ ԵԱԲԴ/0433/02/11, 2015 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ ԼԴ/0435/02/13 և 2023 թվականի օգոստոսի 3-ի թիվ ԿԴ/3359/02/21 գործերով կայացված որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումներին՝ ՀՀ վարչական դատարանը 2025 թվականի հոկտեմբերի 30-ի որոշմամբ գործը վերահասցեագրել է ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին՝ հետևյալ պատճառաբանությամբ. «(...) [Գ]երական կամ համայնքային սեփականություն

հանդիսացող գույքի օբյեկտների աճուրդի արդյունքներն ամփոփող որոշման իրավաչափության հարցի պարզումը բխում է մասնավոր իրավահարաբերություններից, քանի որ սակարկություններ անցկացնելու, դրանց արդյունքում պայմանագրեր կնքելու կամ դրանք անվավեր ճանաչելու և անվավերության հերևանքներ կիրառելու կարգը և հիմքերը սահմանվում և կարգավորվում են քաղաքացիական իրավական նորմերով, իսկ սակարկությունների մասնակիցներն իրավահարաբերության մեջ են մտնում մասնավոր կամքի ինքնավարությամբ, որպիսի պարագայում նշված իրավահարաբերություններում հանրային տարրի առկայությունը բացառվում է:

Տվյալ դեպքում Դատարանը փաստում է, որ սույն գործով ներկայացված հիմնական հայցապահանջը վերաբերում է Արթիկի քաղաքապետի 21.05.2008 թվականի թիվ 964 որոշման առ ոչինչ լինելը ճանաչելուն, որպիսի որոշումն իր հերթին վերաբերում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի օբյեկտների աճուրդում հաղթած անձին նույն հողամասը հանձնելուն, այսինքն՝ փաստացի այն կազմում է աճուրդի անցկացման գործընթացի ամփոփման մասնիկ:

Հաշվի առնելով, որ համայնքային հողամասերի օբյեկտների աճուրդի շուրջ ծագած իրավահարաբերությունները կրում են մասնավոր բնույթ՝ Դատարանը գտնում է, որ այդ գործընթացի արդյունքների ամփոփմանն ուղղված (այդ թվում՝ գույքը հաղթող մասնակցին հանձնելու) իրավահարաբերությունները նույնպես մասնավոր բնույթի են, հերևաբար պետք է փաստել, որ հիմնական պահանջով Դատարանի առջև բարձրացված վեճն ամբողջությամբ ծագել է ոչ թե հանրային իշխանական լիազորություններով օժտված վարչական մարմնի կողմից հանրային շահի իրացման առնչությամբ որևէ հարցի կարգավորման կապակցությամբ, այլ մասնավոր իրավունքի ոլորտում՝ իրավահավասար սուբյեկտների կողմից պայմանագիր կնքելու (սակարկություններ կազմակերպելու) առնչությամբ:

Ողջ ասվածի համալրությամբ Դատարանը ներքին համոզմունք է ձևավորում առ այն, որ սույն գործը, որի լուծման արդյունքում կարող են վերականգնվել հայցվորի ենթադրյալ խախտված իրավունքները, բխում է ոչ թե

հանրային, այլ մասնավոր իրավահարաբերություններից, քանի որ գործի հիմքում դրված և Դատարանի քննությանը վերապահված վեճը թեև ֆորմալ առումով ձևակերպված է հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի դեմ, այդուհանդերձ, բովանդակային առումով ամբողջովին վերաբերում է իրավահավասար սուբյեկտների միջև իրենց քաղաքացիական իրավունքների իրացման (սակարկությունների միջոցով պայմանագրի կնքման) կապակցությամբ ծագած վեճի լուծմանը, ինչը որևիցե կերպ կապված չէ հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի կողմից իր իշխանական-կարգադրիչ գործունեության իրականացման հետ, չունի հանրային բնույթ, ուստիև ենթակա է լուծման մասնավոր իրավունքի նորմերի շրջանակում:

Ամփոփելով վերոգրյալը՝ Դատարանը գրնում է, որ սույն վեճը չի ծագում հանրային իրավահարաբերություններից, ուստի դրա հիման վրա հարուցված գործը ընդդարյա չէ ՀՀ վարչական դատարանին և ենթակա է վերահասցեագրման առաջին աստիճանի ընդհանուր իրավասության համապարասխան դատարան:

Ինչ վերաբերում է գործով ներկայացված ածանցյալ պահանջներին, Դատարանն արձանագրում է, որ հիմնական պահանջի վերահասցեագրման պարագայում դրանցից ածանցվող պահանջները ևս ենթակա են վերահասցեագրման»:

6. Հղում կատարելով ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածների 1-ին մասերին, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածին և 24-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին, 3-րդ հոդվածի 1-ին մասին, 12-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 18-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 21-րդ հոդվածին, 26-րդ հոդվածի 2-րդ մասին, 41-րդ հոդվածի 2-րդ մասին, 49-րդ հոդվածի 4-րդ մասին, 199-րդ և 200-րդ հոդվածներին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին և 3-րդ մասին, 10-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 11-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերին,

¹ Տե՛ս դատական գործը, հատոր 2-րդ, թերթեր 49-56:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերին, 19-րդ հոդվածին և 53-րդ հոդվածի 1-ին մասին, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերին, 7-րդ հոդվածի 1-ին մասին, 18-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ և 10-րդ կետերին, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ, 63-րդ, 67-րդ և 68-70-րդ հոդվածներին, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերին, 129-րդ հոդվածի 2-րդ կետին, 163-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերին, 463–465-րդ հոդվածներին, ինչպես նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի հուլիսի 27-ի թիվ ԵԱԲԴ/0433/02/11, 2023 թվականի օգոստոսի 3-ի թիվ ԿԴ/3359/02/21, 2015 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ ԼԴ/0435/02/13 գործերով արտահայտած իրավական դիրքորոշումներին՝ ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի նոյեմբերի 20-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա չէ ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին և այդ առնչությամբ դիմել է Վճռաբեկ դատարան՝ նշելով հետևյալը. «(...) [Ս]ույն գործով ներկայացված հայցապահանջն իրենից ներկայացնում է հանրային իրավահարաբերություններից բխող պահանջ, քանի որ նախ՝ իրավահարաբերության կողմերը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտներ են, այն է՝ հայցվորը ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին է, իսկ պատասխանողը ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարը: Երկրորդ, սուբյեկտների միջև վիճելի իրավահարաբերությունն առաջացել է հանրային իշխանական լիազորություններով օժտված համայնքի ղեկավարի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման կապակցությամբ, այն է՝ ոչ պարզաճ վարչարարության արդյունքում փաստական հայրենաք առաջացնող վարչական ակտի ընդունմամբ:

(...)

Միաժամանակ Դատարանն արձանագրում է, որ համայնքի ավագանին իրավունք ունի վերահսկողություն իրականացնելու համայնքի ղեկավարի կողմից իր լիազորությունների իրականացման նկատմամբ և դատական կարգով կարող է

վիճարկել ՀՀ Սահմանադրությանը, օրենքներին և համայնքի ավագանու որոշումներին հակասող՝ համայնքի ղեկավարի որոշումները: Համայնքի նշված իրավասությունները սահմանված են «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով և հանդիսանում են օրենքով պարզվորակված լիազորություն:

Վերը նշվածի հաշվառմամբ Դաւրաբանն արձանագրում է, որ սույն գործով կողմերը՝ հայցվորը և պարասիսանողը, հանդիսանում են նույն համայնքի երկու տեղական ինքնակառավարման մարմինները: Իսկ հաշվի առնելով հայցվորի պահանջը, այն հիմնավորելու համար վկայակոչված իրավական և փաստական հիմքերը, Դաւրաբանն արձանագրում է, որ ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին սույն գործով հայցը ներկայացրել է օրենքով իրեն պարզվորակված լիազորությունների իրականացման, այն է՝ ղեկավարի կողմից իր լիազորությունների իրականացման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու և համայնքի ղեկավարի՝ օրենքին հակասող որոշումներն անվավեր ճանաչելու լիազորության իրականացման շրջանակներում:

Բացի այդ, Դաւրաբանն արձանագրում է, որ սույն գործով հայցվորը հայցի հիմքում չի վկայակոչել աճուրդի անցկացման օրենքով նախատեսված ընթացակարգին առնչվող որևէ խախտում, այլ վկայակոչել է ընդհանրապես վիճելի հողափառածքի ֆիզիկական կամ իրավաբանական անձանց օբյեկտներն անօրինակ չլինելու հանգամանքը, որն անմիջականորեն հետևանք է ոչ իրավաչափ վարչարարության, քանի որ Արթիկ համայնքի ղեկավարը հանդես է եկել որպես հանրային իշխանական լիազորություններով օժտված մարմին, այլ ոչ թե որպես քաղաքացիաիրավական մասնավոր սուբյեկտ:

Հայցի առարկան հիմնավորող փաստարկների ուսումնասիրությունից հետևում է, որ հայցվորի նպատակը համայնքի նախկին ղեկավարի գործողությունների իրավաչափության վիճարկումն է, այն է՝ համայնքի ղեկավարի կողմից կայացված վարչական ակտի իրավաչափության վիճարկումը, որի հետևանքով խախտվել է հայցվորի իրավունքը: Այսինքն՝ սույն գործով պահանջի հիմքը ոչ թե անմիջականորեն վարչարարության արդյունքում կայացված աճուրդը, կամ առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու վերաբերյալ

պահանջն է, այլ համայնքի ղեկավարի գործողությունների վիճարկումը, հետևաբար սույն գործով իրավական վեճը բխում է ոչ թե մասնավոր, այլ հանրային իրավահարաբերություններից:

Բացի այդ, Դատարանն արձանագրում է, որ սույն գործով որպես հիմնական պահանջ ներկայացվել է ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի՝ Արթիկի քաղաքապետի 21.05.2008թ. թիվ 964 որոշման առ ոչինչ լինելը ճանաչելու մասին պահանջը: Այդ կապակցությամբ Դատարանն արձանագրում է, որ ՀՀ հողային օրենսգրքի 68-70-րդ հոդվածների, «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 2-րդ գլխում սահմանված ներմերի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 463-465-րդ հոդվածներով սահմանված նորմերի վերլուծությունից հետևում է, որ աճուրդի արդյունքները ամփոփելու մասին արձանագրությունը կազմելու փաստով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վաճառքը աճուրդով իրականացնելու հարաբերությունները համարվում են դադարած, որին պետք է հաջորդի աճուրդով օրարված հողամասը գնորդին հանձնելու գործընթացը, որը, ըստ օրենսդրական կարգավորումների, պետք է իրականացվի համայնքի և աճուրդում հաղթող ճանաչված անձի միջև առուվաճառքի պայմանագիր կնքելու միջոցով: Իսկ աճուրդի արդյունքները հաստատելու մասին համայնքի ղեկավարի կողմից որոշում կայացնելու օրենսդրական պահանջ սահմանված չէ:

Անդրադառնալով Արթիկի քաղաքապետի 21.05.2008թ. թիվ 964 որոշմանը, որի առ ոչինչ լինելը ճանաչելու պահանջ է ներկայացվել սույն գործով, Դատարանն արձանագրում է, որ այդ որոշման բովանդակությունից հետևում է, որ այն ունի արտաքին ներգործություն, դրանով հասցեատիրոջ՝ Մ.Բ., համար սահմանված են հստակ իրավունքներ, այդ թվում՝ որոշման մեջ նշված գույքը, որպես սեփականություն, այդ անձին հանձնելու մասին, ինչպես նաև պարտականություններ, այդ թվում՝ այդ անձին պարտավորեցվել է քաղաքապետարանի հետ կնքել պայմանագիր և կատարել որոշման մեջ նշված այլ հստակ գործողություններ:

Վերը նշվածի հաշվառմամբ Դատարանը գնում է, որ Արթիկի քաղաքապետի 21.05.2008թ. թիվ 964 որոշումը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի իմաստով հանդիսանում է վարչական ակտ, իսկ վարչական ակտի իրավաչափությունը անվիճելիորեն պետք է ստուգվի ՀՀ վարչական դատարանում»²:

Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը.

7. Սույն գործով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *հիմնավոր է արդյո՞ք ՀՀ Շիրակի մարզի առաջին արյանի ընդհանուր իրավասության դատարանի հերկությունն այն մասին, որ թիվ ՎԴ5/0312/05/25 գործն ըստ ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու հայցի ընդդեմ ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի, երրորդ անձինք՝ ՀՀ կադաստրի կոմիտե, Մ.Բ. և Է.Յ.՝ ՀՀ Շիրակի մարզի Արթիկի քաղաքապետի՝ 2008 թվականի մայիսի 21-ի թիվ 964 որոշման առոչինչ լինելը ճանաչելու, որպես հերկանք՝ 2008 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 2264 հողամասի առուվաճառքի պայմանագիրը և 2008 թվականի նոյեմբերի 6-ին Մ.Բ. և Է.Յ.-ի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջներով ենթակա չէ ՀՀ Շիրակի մարզի առաջին արյանի ընդհանուր իրավասության դատարանին:*

8. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Մասնագիտացված դատարաններն են՝

1) *վարչական դատարանը. (...):*

Նույն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Առաջին արյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի»:

² Տե՛ս դատական գործը, հատոր 2-րդ, թերթեր 70-74:

Նույն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին արյանի դատարանում, բացառությամբ «Մասնկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի և հակակոռուպցիոն դատարանին ենթակա գործերի»:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (...) կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն՝ «(...) 2. Դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում վարչական դատարանից վերահասցեագրված հայցադիմումը վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը:

(...)

6. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված դեպքերում Վճռաբեկ դատարանի նախագահը և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահները գործը Վճռաբեկ դատարանում սրանալու պահից տասնօրյա ժամկետում որոշում են գործի ենթակայությունը:

7. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունելու համար Վճռաբեկ դատարանի նախագահը հրավիրում է նիստ՝ իր և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահների մասնակցությամբ, որն իրավազոր է, եթե դրան մասնակցում են նիստին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք:

8. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունվում է նիստին ներկա անձանց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Քվեարկելիս

ձեռնպահ մնալ չի թույլատրվում: Որոշմանը կողմ քվեարկած դատավորների կազմից և նրանց կողմից որոշված դատավորը կազմում է որոշման նախագիծը:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան:

10. Սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով գործի ենթակայությունը սահմանելու մասին որոշում կայացվելու դեպքում չի կարող վերաքննիչ բողոք քերվել սույն օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետի հիմքով այն պարճառաբանությամբ, որ գործը ենթակա չի եղել քննության քաղաքացիական դատավարության կարգով»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Վարչական դատարան կարող են դիմել նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինները կամ պաշտոնատար անձինք՝ ընդդեմ վարչական մարմնի, եթե համարում են, որ այդ մարմնի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ խախտվել կամ անմիջականորեն կարող են խախտվել պետության կամ համայնքի այն իրավունքները, որոնց պաշտպանության լիազորությունը դրված է իրենց վրա, եթե այդ վեճը ենթակա չէ լուծման վերադատության կարգով»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ «Վարչական դատարանին ընդդարյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, ներառյալ՝ վարչական մարմինների միջև այն վեճերը, որոնք ենթակա չեն լուծման վերադատության կարգով (...)»:

9. Վճռաբեկ դատարանը, ՀՀ գլխավոր դատախազությունն ընդդեմ ՀՀ Կուրայքի մարզպետարանի, Զարիկ Գարուշի Գևորգյանի, երրորդ անձ՝ ՀՀ կադաստրի կոմիտե գործով 2023 թվականի օգոստոսի 3-ի որոշմամբ անդրադառնալով մարզպետի որոշման հիման վրա պետական սեփականություն հանդիսացող հողերի օտարման աճուրդն անվավեր ճանաչելու պահանջի մասին վեճի՝ հանրային կամ մասնավոր իրավահարաբերություններից ծագելու հարցին, եզրահանգել է. «(...) [Մ]ակարկություններ անցկացնելու, դրանց արդյունքում

պայմանագրեր կնքելու կամ դրանք անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու կարգը և հիմքերը սահմանվում և կարգավորվում են քաղաքացիական իրավական նորմերով, իսկ սակարկությունների մասնակիցներն իրավահարաբերության մեջ են մտնում մասնավոր կամքի ինքնավարությամբ, ինչն ինքնին բացառում է սակարկություններին մասնակցող անձանց վարչական կամ իշխանական և ընդհանրապես որևէ ենթակայության ներքո գտնվելու հանգամանքը:

(...)

Վերոգրյալից հետևում է, որ հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի՝ իրավահարաբերության կողմ լինելը դեռևս չի նշանակում, որ իրավահարաբերությունը հանրային բնույթի է, քանի որ հանրային բնույթը՝ որպես իրավահարաբերության բնութագրիչ, ծավալային առումով ներառում է իրավահարաբերության թե՛ սուբյեկտային կազմը, թե՛ օբյեկտը, թե՛ բովանդակությունը և ի հայտ է գալիս միայն վերոնշյալ երեք տարրերի համակցությամբ: Վարչական մարմինը որոշակի իրավահարաբերության մեջ կարող է ներկայանալ ոչ միայն որպես հանրային իշխանական լիազորություններ կրող մարմին, այլ նաև որպես տվյալ իրավահարաբերության մյուս մասնակիցներին հավասար սուբյեկտ (մասնավոր ինքնավարություն): Ի տարբերություն հարկադիր էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչելու հայցապահանջի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 463-465-րդ հոդվածների հիմքով անցկացվող սակարկություններում որպես սակարկությունների կազմակերպիչ կարող է հանդես գալ գույքի սեփականատերը, իրավունքների տիրապետողը, աշխատանքներ կամ ծառայություններ առաջարկողը, ինչպես նաև այն անձը, ով գործում է սեփականատիրոջ կամ իրավատիրոջ հետ կնքված գրավոր պայմանագրի հիման վրա և հանդես է գալիս նրանց կամ իր անունից»³:

10. Նախորդ կետում վկայակոչված իրավադրույթների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրն առաջին ատյանի ընդհանուր իրավասության

³ Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ ՀՀ գլխավոր դատախազությունն ընդդեմ ՀՀ Կոտայքի մարզպետարանի, Ջարիկ Գարուշի Գևորգյանի, երրորդ անձ ՀՀ կադաստրի կոմիտե՝ գործով 2023 թվականի օգոստոսի 3-ի թիվ ԿԴ/3359/02/21 որոշումը:

դատարանին է վերապահել այն բոլոր գործերը, որոնց քննությունը վերապահված չէ մասնագիտացված դատարաններին, այդ թվում՝ վարչական դատարանին: Մինևույն ժամանակ, օրենսդիրը սահմանել է վարչական դատարանի ընդդատության շրջանակը, որում ներառված են հանրային իրավահարաբերություններից բխող վեճերի վերաբերյալ գործերը: Փաստորեն, որևէ դատական գործի՝ վարչական կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում քննության ենթակա լինելու հարցը որոշվում է՝ հիմք ընդունելով այն իրավահարաբերության բնույթը (մասնավոր կամ հանրային), որից բխող վեճը հանձնվում է դատարանի քննությանը:

Միաժամանակ, ենթակայության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն: Այդ չափանիշների հիմքում ընկած է ոչ թե իրավակիրառների սուբյեկտիվ հայեցողությունը, այլ՝ հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարանջատման օբյեկտիվ հատկանիշները, որոնց ուսումնասիրությամբ գործը քննող դատարանը որոշում է տվյալ վեճի ենթակայության հարցը:

11. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին 2025 թվականի մայիսի 17-ին հայցադիմում է ներկայացրել (փոստին է հանձնել) ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի, երրորդ անձինք՝ ՀՀ կադաստրի կոմիտե, Մ.Բ. և Է.Յ.՝ ՀՀ Շիրակի մարզի Արթիկի քաղաքապետի՝ 2008 թվականի մայիսի 21-ի թիվ 964 որոշման առոչինչ լինելը ճանաչելու, որպես հետևանք՝ 2008 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 2264 հողամասի առուվաճառքի պայմանագիրը և 2008 թվականի նոյեմբերի 6-ին Մ.Բ. և Է.Յ.-ի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին,

- ՀՀ վարչական դատարանի՝ 2025 թվականի հոկտեմբերի 30-ի որոշմամբ գործը վերահասցեագրվել է ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր

իրավասության դատարանին՝ այն հիմքով, որ ներկայացված հիմնական հայցապահանջը վերաբերում է Արթիկի քաղաքապետի՝ 2008 թվականի մայիսի 21-ի թիվ 964 որոշման առոչինչ լինելը ճանաչելուն, որը վերաբերում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի օտարման աճուրդում հաղթած անձին՝ նույն հողամասը հանձնելուն, այսինքն՝ փաստացի այդ որոշումը կազմում է աճուրդի անցկացման գործընթացի ամփոփման մասնիկ, իսկ համայնքային հողամասերի օտարման աճուրդի շուրջ ծագած իրավահարաբերությունները կրում են մասնավոր բնույթ, ուստի այդ գործընթացի արդյունքների ամփոփմանն ուղղված (այդ թվում՝ գույքը հաղթող մասնակցին հանձնելու) իրավահարաբերությունները նույնպես մասնավոր բնույթի են,

- ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի նոյեմբերի 20-ի որոշմամբ գտել է, որ հայցվորը հայցի հիմքում չի վկայակոչել աճուրդի անցկացման՝ օրենքով նախատեսված ընթացակարգին առնչվող որևէ խախտում, այլ վկայակոչել է ընդհանրապես վիճելի հողատարածքի՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց օտարման ենթակա չլինելու հանգամանքը, որն անմիջականորեն հետևանք է ոչ իրավաչափ վարչարարության, այսինքն՝ սույն գործով պահանջի հիմքը ոչ թե անմիջականորեն վարչարարության արդյունքում կայացված աճուրդը, կամ առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու վերաբերյալ պահանջն է, այլ՝ համայնքի ղեկավարի գործողությունների վիճարկումը, հետևաբար սույն գործով իրավական վեճը բխում է ոչ թե մասնավոր, այլ հանրային իրավահարաբերություններից:

12. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 8-9-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է նշել, որ սույն գործով ներկայացված հիմնական պահանջն առնչվում է ՀՀ Շիրակի մարզի Արթիկի քաղաքապետի՝ 2008 թվականի մայիսի 21-ի թիվ 964 որոշման (որը վերաբերում է Արթիկ համայնքի սեփականություն հանդիսացող՝ ■■■■■■■■■■ փողոցից արևմուտք՝ ■■■■■■■■■■■■■■■■ հասցեում գտնվող 0,05հա մակերեսով հողատարածքն աճուրդում հաղթող ճանաչված Է.Յ.-ին սեփականության

իրավունքով հանձնելուն) առոչինչ լինելը ճանաչելուն, որպիսի պահանջը հայցվորը հիմնավորում է այն փաստարկներով, որ աճուրդով վաճառված վեճի առարկա հողամասն ընդգրկված է եղել ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝ օտարման ոչ ենթակա հողամասերի ցանկում և դրա օտարումն արգելված է եղել օրենքով:

Հարկ է նշել, որ չնայած նրան, որ հայցի առարկան ձևական առումով համապատասխանում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ճանաչման հայցատեսակին, նշված հայցատեսակով հայցի առարկան ՀՀ վարչական դատարանի քննության առարկա կարող է դառնալ միայն այն դեպքում, երբ կողմերի միջև առաջացած վեճը ծագած լինի հանրային իրավահարաբերություններից, քանի որ ՀՀ վարչական դատարանին ենթակա են միայն հանրային իրավահարաբերություններից ծագող գործերը: Ուստի, անկախ հայցվորի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված հայցատեսակներից որևէ մեկին համապատասխան ձևակերպված պահանջի ներկայացմանը, վեճը չի կարող ՀՀ վարչական դատարանի քննության առարկա դառնալ, եթե այն չի բխում հանրային իրավահարաբերություններից:

Մինչդեռ, համաձայն ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2023 թվականի օգոստոսի 3-ի թիվ ԿԴ/3359/02/21 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշման՝ պետական սեփականություն հանդիսացող հողերի օտարման աճուրդի շուրջ ծագած իրավահարաբերությունները կրում են մասնավոր բնույթ, ըստ այդմ՝ այդ գործընթացի արդյունքների ամփոփման իրավահարաբերությունները նույնպես մասնավոր բնույթի են, հետևաբար սույն գործով ծագած իրավական վեճը՝ աճուրդի արդյունքների ամփոփման որոշման առոչինչ լինելը ճանաչելու մասին, նույնպես կրում է մասնավոր բնույթ:

Հաշվի առնելով, որ սույն գործով հայցի առարկան՝ Արթիկի քաղաքապետի՝ 2008 թվականի մայիսի 21-ի թիվ 964 որոշման առոչինչ լինելը ճանաչելու պահանջն է, որպիսի հարաբերություններն ունեն մասնավոր-քաղաքացիաիրավական բնույթ՝ այնքանով, որքանով հայցի առարկայով վիճարկվող որոշումը կազմում է աճուրդի

գործընթացի արդյունքների ամփոփման իրավահարաբերությունների բաղկացուցիչ մաս, ուստի սույն գործը ենթակա է ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը:

13. Վերոգրյալից հետևում է, որ ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ5/0312/05/25 գործն ըստ ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու հայցի ընդդեմ ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի, երրորդ անձինք՝ ՀՀ կադաստրի կոմիտե, Մ.Բ. և Է.Յ.՝ ՀՀ Շիրակի մարզի Արթիկի քաղաքապետի՝ 2008 թվականի մայիսի 21-ի թիվ 964 որոշման առոչինչ լինելը ճանաչելու և որպես հետևանք՝ 2008 թվականի նոյեմբերի 4-ին կնքված հողամասի առուվաճառքի թիվ 2264 պայմանագիրն ու գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մատյանում 2008 թվականի նոյեմբերի 6-ին Մ.Բ. և Է.Յ.-ի սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, ենթակա չէ ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, հիմնավոր չէ:

Ուստի, ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու հայցադիմումի հիման վրա հարուցված թիվ ՎԴ5/0312/05/25 գործը ենթակա է ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

թիվ ՎԴ5/0312/05/25 գործն ըստ ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու հայցի ընդդեմ ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի, երրորդ անձինք՝ ՀՀ կադաստրի կոմիտե, Մ.Բ. և Է.Յ.՝ ՀՀ Շիրակի մարզի Արթիկի քաղաքապետի՝ 2008 թվականի մայիսի 21-ի թիվ 964 որոշման առոչինչ լինելը ճանաչելու և որպես հետևանք՝ 2008 թվականի նոյեմբերի 4-ին կնքված հողամասի առուվաճառքի թիվ 2264 պայմանագիրն ու գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մատյանում 2008 թվականի նոյեմբերի 6-ին Մ.Բ. և Է.Յ.-ի սեփականության

իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, ենթակա է ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

**ՀՀ ՎՃՌԱԲԵԿ
ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ ԼԻԼԻԹ
ԹԱԴԵՎՈՍՅԱՆ**

**ՀՀ ՎՃՌԱԲԵԿ
ԴԱՏԱՐԱՆԻ
ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՀՈՎՍԵՓ ԲԵԴԵՎՅԱՆ**

**ՀՀ ՎՃՌԱԲԵԿ
ԴԱՏԱՐԱՆԻ
ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ
ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ**

**ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ
ԳՈՌ ՀԱԿՈԲՅԱՆ**

**ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ**